սեղան, որի վրայ Աւետարան եւ խաչ: Այնուհետեւ հերթով գալիս են միւս տանուտէրերն ու պատգամաւորները, նախագահի աջ եւ ձախ կողմերում չարուած:

— «Ահաւասիկ այս խորանը, ուր բաղմում են տանուտէրերը — սա՛ է Հայոց Տունը եւ այստեղից ելած օրէնքը հայոց թագաւորն է» (մլդ, մլե) — բացականչում է Շահամիրեանը:

Հանրապետութեան նախագահը

Ամենից կարեւոր պաշտօնը Շահամիրեանի ծրագրած անկախ Հայաստանում Հանրապետութեան նախագահի — որին, ինչպէս տեսանք, հեղինակը «նախարար» է կոչում — պաշտօնն է: Նրան ենթարկւում են ամէնքը, բացի «բարձրագահ եւ բարեվարք տունն Հայոց», որովհետեւ «ոչ ոք ծնունդ ի բնութենէ մադոց ունի իշխանութիւն յիշխել ի վերայ տանն Հայոց» (ծա): Նա ազգ. ժողովում ունի երկու ձայն եւ ամէն տեղ, թէ՛ պաշտօնական եւ թէ՛ մասնաւոր հաւաքոյթների ժամանակ, բռնում է նախապատիւ եւ առաջին աթոռը — ազգային ժողովում, եկեղեցում, խնջոյքներում, եւն.:

Չնայած իր բացառիկ դիրքին, Հանրապետութեան նախագահը ոչ մի բացառիկ իրաւունք չի վայելում. նա կոչուած է օրէնքով կառավարելու եւ օրէնքից մազի չափ անգամ շեղուելու իշխանութիւն չունի: Յետին քաղաքացին իսկ կարող է նրա ձեռքից բռնդքել դատարանին եւ պատասխանատուութեան կանչել (ենթգ): Աւելի. պաշտօնէութիւնը, որ անմիջապէս նրան է ենթարկւում, իրականի մէջ շատ քիչ կախում ունի նրանից. նա չի կարող պաշտօնեային իջեցնել կամ հեռացնել պաշտօնից: Նա կարող է միայն ժամանակաւորապէս կախակալել նրան — մինչեւ գործը քննուի դատարանով: Եւ եթէ պաշտօնեան անպարտ դուրս եկաւ, նա նորից ստանում է իր պաշտօնը, իսկ նախագահը վճարում է նրա բոլոր վնասները (ծա, մլզ, մը, յթ):

Հանրապետութեան նախագահին ընտրում է Ազգ. ժողովը իր մէջից եւ երեք տարի ժամանակով: Սակայն ընտրութեան եղանակի համար կայ երկու օրէնք, մէկը միւսին հակասող եւ ջնջող: Ըստ թիւ 20 օրէնքի, այդ ընտրութիւնը կատարւում է սովորական ձեւով, այսինքն՝ ազգային ժողովն ընտրում է ձայների մեծամասնութեամբ համապատասխան մէկին՝ «այր մի տէր պատուոյ եւ դաւառի սեփական յազգէն հայոց դաւանութեամբ Հայաստանեաց սուրբ եկեղեցւոյ»:

Ըստ թիւ 49 օրէնքի՝ այդ ընտրութիւնը կատարւում է մի տարօրինակ ձեւով ոչ թէ սկզբից մի քանի յարմարագոյն թեկնածուներ են առաջարկւում եւ ապա նրանցից մէկին ու մէկին ընտրում, այլ մի անգամից ընտրում են 13 հոգի եւ նրանցից որին որ դուրս եկաւ, պատահարար, թիւ 1 վիճակը, նա էլ դառնում է Հանր. նախագահ, իսկ մնացած 12 հոգին նրա խորհրդակիցները — բայց ոչ խորհրդատուները — կոչուելով երկրորդ, երրորդ եւ այլն, մինչեւ 13-րդ խորհրդակիցներ, համաձայն իրենց հանած վիճակների:

Պարզ են ընտրութեան մէկ այսպիսի ձեւի հետ կապուած անպատեհութիւնները, որովհետեւ նախ՝ 13 արժանաւոր թեկնածուներ գտնելը շատ աւելի դժուար է, քան 2 կամ 3-ը, եւ երկրորդ՝ վիճակը կարող է դուրս գալ այդ 13-ի միջից էլ ամենից նուազ յարմարագոյնին:

Սակայն, ընտրութեան այդպիսի ձեւը ցոյց է տալիս, որ նախ եւ առաջ՝ Շահամիրեանը վիճակահանութեան մէջ նախախնամութեան մատը տեսնելով, կասկած չունի նրա յաջող եւ նպատակայարմար ելքի նկատմամբ: Երկրորդ՝ որ նա շատ քիչ նշանակութիւն է ընծայում անհատական կամ միանձնեայ սկզբունքին պետական կեանքում եւ ընդհակառակը, չափազանց մեծ դեր կոլեգիալ կամ հաւաքականութեան սկզբունքին:

Միւս կողմից՝ ընտրութեան այդ ձեւն ապացուցում է, թէ այսպէս կոչուած 12-ի այդ խորհուրդը — որը երբեմն նաեւ ծածուկ խորհրդարան1) է կոչւում — առաջնակարգ նշանակութիւն ունեցող մի հիմնարկութիւն է Հայաստանի Հանրապետութեան մէջ, ազգ. ժողովից յետոյ դուցէ երկրորդը, որի միայն

1) 23-րդ օրէնքի մէջ այս հիմնարկութիւնը կոչուած է «ապարան ծայրագոյն դատաստանի», անշուշտ կամ սխալմամբ, այդ մարմինը չփոթելով նոյնանուն դատաստանական հիմնարկութեան հետ եւ կամ ի նկատի ունենալով այն, որ այդ մարմինը հանդիսանում